Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ՔԱՀԱՆԱ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(13 հունվարի 2024 թ.)

Սիրելի՛ հոգեւոր հայրեր, եղբայրներ, սիրելի՛ հավատացյալ քույրեր եւ եղբայրներ, նախ ուզում եմ որդիական խորին երախտագիտություն հայտնել Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ինձ եւ իմ քահանա եղբայրներին վերապատրաստման դասընթացների համար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հրավիրելու համար: Կամենում եմ նաեւ մասնավոր շնորհակալություն հայտնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանին, որ առիթ ընձեռեց Սուրբ Գայանեի վանքի՝ ինձ համար շատ հարազատ կամարների ներքո, որտեղ երկար տարիներ ծառայել եմ իբրեւ սարկավագ, մատուցել Սուրբ Պատարագ եւ աղոթակից լինել ձեզ՝ ամենքիդ:

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Իւղ անոյշ հեղեալ է անուն քո»
(Երգ երգոց Ա. 2):

Մեր քարոզին այս բնաբանն ենք ընտրել, որովհետեւ այսօր սուրբծննդյան ութերորդ օրն է, եւ մենք տոնում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի Անվանակոչության օրը, երբ մեր Տիրոջը թլփատեցին եւ անուն դրեցին:

Այսօր տարվա մեջ ամենակարճ ավետարանական հատվածի ընթերցումն է՝ Ղուկասի Ավետարանի Բ. գլխի 21-րդ համարը: Այդտեղ պատմվում է այն մասին, որ երբ մեր Տիրոջ ծննդյան ութերորդ օրը լրացավ, Նրան թլփատեցին եւ Նրա անունը դրեցին Հիսուս, այնպես, ինչպես Գաբրիել հրեշտակապետն ավետել էր Սուրբ Տիրամորը՝ նախքան նրա հղանալը, եւ Հովսեփ Աստվածահորը, որ նշանածն էր Սուրբ Կույս Մարիամի:

Ինչո՞ւ էին իսրայելացիներն իրենց զավակների անունները դնում 8-րդ օրը՝ թլփատության ժամանակ, եւ ինչ է նշանակում Հիսուս անունը։

Նախ թլփատության մասին կարդում ենք Ծննդոց գրքի ԺԷ. գլխում, Աստված այսպես է պատվիրում Աբրահամին.

«Այս է իմ ուխտը... Ձեր արու մանուկները ութօրյա հասակում պետք է թլփատվեն սերնդեսերունդ» (Ծնն. ԺԷ. 10–12)։

Այսինքն՝ Աբրահամի սերնդի բոլոր արու զավակները պիտի թլփատվեին, որով պիտի ցույց տային, թե իրենք Աստծու ժողովուրդն են։ Բայց, ինչպես հաճախ երեւում է Հին Կտակարանում, հրեա ազգը թլփատության միայն արտաքին կողմին էր հետեւում, եւ այդ պատճառով թե՛ Երկրորդումն Օրինաց գրքում եւ թե՛ Երեմիայի մարգարեության մեջ տեսնում ենք, որ Աստված մասնավորեցնում է, որ Իր խոսքը զուտ մարմնավոր թլփատության մասին չէ։

Այսպես՝ Երկրորդումն Օրինաց գրքի եբրայեցերեն բնագրում կարդում ենք. «Թլփատեցե՛ք ձեր սրտի անթլփատությունը, եւ ձեր պարանոցներն այլեւս մի՛ խստացրեք» (Բ. Օր. Ժ. 16)։

Իսկ Երեմիա մարգարեն Աստծու անունից այսպես է ասում. «...Ձեր Աստծո՛ւ համար թլփատվեք, ձեր սրտի անթլփատությո՛ւնը թլփատեք» (Եր. Դ. 4)։

Եւ այսպես՝ մենք տեսնում ենք, որ արդեն Հին Կտակարանում խոսվում է այն մասին, որ Աստծուն պետք չեն զոհաբերության արտաքին կողմերը միայն, եւ Աստված մեզնից ուզում է մեր սրտերը, եւ մենք պետք է մեր սրտի անթլփատությունը թլփատենք։

Իսկ ինչ կարիք կար ընդհանրապես ինչ-որ թլփատության, ինչ էր դա նշանակում։

Մենք գիտենք, որ նախահայր Ադամի եւ նախամայր Եվայի մեղանչումից հետո մարդիկ զրկվեցին Աստծու ներկայությունից, բայց Աստված մարդուն մենակ չթողեց, նրան որպես ապաշխարություն տվեց չարչարանքով հացը վաստակելը, կնոջը՝ ցավերով ծննդաբերելը եւ իր ամուսնուն հնազանդվելը, եւ ի վերջո, որպես ապաշխարության վերջնական դրսեւորում, նրանց երկուսին եւ մեզ իբրեւ ադամորդիների՝ տվեց մահը՝ ըստ Ծննդոց գրքում հիշված Աստծու խոսքի, թե՝ «հող էիր եւ հող էլ պիտի դառնաս»։

Աստված չսահմանափակվեց միայն դրանով, այլ նաեւ Իր համար ընտրեց ամուլ մի մարդու՝ Աբրամին, որի սերունդը պիտի կոչվեր Աստծու

ժողովուրդ, եւ այդ սերնդից պիտի ծնվեր Փրկիչը՝ Մեսիան։ Այս պատճառով Տերը նրա անունը դրեց Աբրահամ, որ նշանակում է «ժողովուրդների հայր», եւ տվեց նրան թլփատության նշանը, որպեսզի ամեն ոք, որ պետք է Աստծու ժողովրդի մասը դառնար, իրեն առանձնացներ աշխարհից, պատրաստ լիներ իրենից կտրելու այն մեղքը, որի պատճառով բաժանված էր Աստծուց։ Նույն նպատակով հատուկ ուխտեր կնքեց իր ժողովրդի հետ, նախ՝ Աբրահամի, ապա նաեւ՝ մյուս նահապետների։ Իսկ Եգիպտոսից դուրս գալու ժամանակ Սինա լեռան վրա Տասնաբանյա պատվիրանների տեսքով Հին Ուխտը կնքեց արդեն ամբողջական Իսրայելի ժողովրդի հետ։ Բոլոր այս ուխտերի մեջ մշտապես առկա է մարգարեական խոստումն այն մասին, որ ծնվելու է այն մեկը, որ պիտի փրկի մարդկային ազգը մեղքի ու մահվան կապանքներից։ Ուրեմն թլփատությունը տրվեց որպես գալիք իրական դեպքերի նախանշան։

Այս է պատճառը, որ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Սուրբ Հոգու ներգործությամբ հրաշալի կերպով ծնվելով Սուրբ Կույս Աստվածածին Մարիամից, Իր ծննդյան ութերորդ օրը թլփատվեց՝ առաջին անգամ հեղելով Իր սուրբ արյունը։ Նա կարիք չուներ թլփատությամբ Աստծու ժողովրդի մաս դառնալու, քանի որ Աստծու Որդին էր ծնունդով, ինչպես նաեւ կարիք չուներ մեղքից Իրեն կտրելու, քանի որ նախքան ճանաչելը հրաժարվել էր մեղքից։ Հիսուս թլփատվեց, որպեսզի Աստծու ամեն արդարություն կատարվի։ Այդ քայլով Տերը մեզ նաեւ շատ կարեւոր եւ մեծ հիմնավորում տվեց. Իր մարդեղացումն իրական էր եւ ոչ երեւութապես, քանի որ թլփատության ժամանակ արյունը հեղվեց։

Քրիստոնյաներիս կյանքում թլփատության խորհուրդն ընկալելու համար պիտի անդրադառնանք Պողոս առաքյալի՝ կողոսացիներին ուղղված նամակին, որն այսօր ընթերցեցինք։ Այստեղ նա խոսում է այն մասին, թե ինչպիսին պիտի լինի թլփատությունը մեր կյանքում։ Պողոս առաքյալը գրում է, որ մենք եւս թլփատված ենք, բայց թլփատված ենք ոչ թե մեր արյան հեղումով, այլ ջրի մեջ մկրտությամբ՝ Սուրբ Հոգու մեջ մկրտությամբ։

Տերը՝ Հիսուս Քրիստոս, լինելով Աստծու Որդին եւ միեւնույն ժամանակ Իր մարմնի մեջ միավորելով Աստծու ժողովրդին, հնարավորություն է տալիս մեզ մասնակից դառնալու Իր թլփատության շնորհի խորհրդին Իր մարմնին միավորվելու միջոցով։ Այսինքն՝ մենք ֆիզիկական թլփատություն չենք կատարում, քանի որ մեր Տեր Հիսուս Քրիստոս

արդեն մեկ անգամ եւ ընդմիշտ թլփատվեց՝ Իր աստվածամարդկային մարմնի մեջ միավորելով իրական Եկեղեցին՝ Աստծու ժողովրդին։ Իսկ մենք այդ թլփատությանը մասնակից ենք դառնում ապաշխարության միջոցով եւ Սուրբ Հոգու ներգործությամբ՝ մկրտության սուրբ խորհրդով Աստծու Որդու մարմնին եւ Աստծու ժողովրդին միավորվելու շնորհիվ։ Այդ պատճառով Պողոս առաքյալն ասում է, որ մենք Քրիստոսով թլփատվեցինք հավատով՝ անձեռագործ թլփատությամբ, Քրիստոսի թլփատությամբ՝ մերկանալով մեղանչական մարմնից (Կող. Բ. 11), ուրեմն մենք մասնակից ենք դառնում մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի թլփատությանը մկրտության շնորհով եւ մեր մեղանչական մարմնից մերկանում ենք՝ միավորվելով Տիրոջ անմեղ եւ սուրբ մարմնին։

Բայց արդյո՞ք այդպես է իրականում։

Իրականում մենք պիտի ունենանք սրտի թլփատությունը եւ ապա գանք մկրտության, որով մեր ընտրությունը՝ սրտի մեջ մեղքից եւ աշխարհից հրաժարումը պիտի արձանագրվի Սուրբ Հոգու կնիքով։ Փոխարենը, ցավոք, շատ հաճախ հակառակն է լինում։ Նմանվելով հրեաներին՝ մենք շարունակ կատարում ենք ծիսական արարողության արտաքին կողմը միայն՝ ջրի մեջ ընկղմում, մյուռոնով օծում, բայց մեր սիրտը մնում է անթլփատ՝ մեղքից անբաժան։

Նորից կուզեմ հիշել Աստծու խոսքը՝ ասված Երեմիա մարգարեի շուրթերով.

«Ձեր Աստծո՛ւ համար թլփատվեք, ձեր սրտի անթլփատությո՛ւնը թլփատեք, որովհետեւ գուցե ձեր չար գործերի պատճառով իմ բարկությունն իբրեւ հուր ելնի ու բորբոքվի, եւ մեկը չգտնվի, որ հանգցնի այն» (Եր. Դ. 4)։

Այն միակը, որ մարում է Աստծու բարկության հուրը, մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսն է եւ դրա համար էլ կոչվեց Հիսուս, որ նշանակում է Փրկիչ։ Նա Իր վրա վերցրեց Աստծու բարկությունը եւ շիջում է այդ բարկության կրակը նրանց համար, ովքեր իրենց սրտի թլփատությամբ եւ մկրտությամբ միանում են Իր մարմնին։ Իսկ եթե մենք միայն արտաքին ձեւը պահենք, բայց մեր սիրտը մնա անթլփատ, այդ կրակը մեզ համար եւ մեզ վրա է արծարծվելու։

Ուրեմն մասնակիցը դառնալու համար մեր Տեր Հիսուս Քրիստոսի փրկությանը, որը որպես տնօրինություն կատարվում է նրա ութօրյա թլփատությամբ, մենք պարտավոր ենք մեր սրտերը մաքրել, մեր սրտե-

ը թլփատել, վանել մեզանից մեղքը՝ ամեն կերպ ձգտելով ապրել սրբության մեջ։

«Քրիստոսի մեջ է մարմնապես բնակվում Աստվածության ամբողջ լիությունը,— ասում է Պողոս առաքյալը,— դուք էլ նրանով լցվեցիք (Կող. Բ. 9—10)։ Եւ «քանի որ մեր Աստվածը ոչնչացնող կրակ է», ուրեմն զգույշ լինենք, քանի որ եթե մենք մկրտվեցինք Քրիստոսով, եւ Քրիստոս բնակվում է մեր մեջ, ինչպես Պողոս առաքյալն է ասում, ուրեմն աստվածային կրակը մեր մեջ է, ոմանց համար այրող եւ ոչնչացնող, մյուսների համար՝ մաքրագործող եւ սրբացնող կրակ։

Մենք հիմա ազգովի ապրում ենք չափազանց ծանր եւ դառն օրեր, բայց ես կամենում եմ, որ մենք Անվանակոչության այս տոնի օրը մեր աչքերը վերստին ուղղենք այն Միակին, Որի անունով կարող ենք փրկություն գտնել, ինչպես որ Պետրոս առաքյալն է ասում. «Եւ ուրիշ մեկի միջոցով փրկություն չկա, որովհետեւ երկնքի տակ չկա մարդկանց տրված մեկ այլ անուն, որով մենք կարողանանք փրկվել» (Գործք Դ. 12)։

Հիսուս նշանակում է Փրկիչ, եւ Ինքն է, որ մեզ փրկում է մեր մեղքերից, որի մասին Գաբրիել հրեշտակապետն ազդարարեց։ Իսկ մնացած ամեն պատուհաս մեզ բաժին է ընկնում, որովհետեւ Աստծուն մեր մեջ մենք ընդունում ենք մեղքերով լցված վիճակում։ Եւ քանի որ Աստծու ամբողջ լիությունը, որ Քրիստոսի միջոցով հայտնվեց մեզ, մկրտության խորհրդի շնորհով բնակվում է մեր մեջ, ուրեմն եթե մենք շարունակենք մեղքերի մեջ մնալ, Աստծու հետ մերձեցումը մեզ համար շարունակ կործանման եւ ոչնչացման նման մի բան պիտի լինի։ Իսկ եթե մենք մեղքերից հրաժարումով մոտենանք Նրան, գոնե ցանկությամբ՝ մեր կամքով, այսինքն՝ մեր սրտի հրաժարումով թլփատենք մեղքը մեզանից, գուցե թե գործերով վերջնականապես չկարողանանք հրաժարվել, գուցե թե սովորության համաձայն՝ շարունակենք որոշ մեղքեր գործել, բայց սրտով չցանկանանք ու չսիրենք մեղքը։ Եւ այդ ժամանակ Աստծու կրակը մեզ համար կդառնա մաքրագործող կրակ, եւ Իր փրկությանն արժանի կլինենք նաեւ այս ծանր ժամանակներում։

Ուրեմն մեր աչքի առաջ չունենանք ուրիշ մի փրկչի՝ ո՛չ պետության, ո՛չ մարդու, ո՛չ որեւէ սրբի, ո՛չ որեւէ արդարի, ո՛չ որեւէ նախագահի կամ զորավոր մեկի։ Մեր փրկությունը, միակ փրկությունը կարող է լինել Տեր Հիսուսի միջոցով, որովհետեւ ուրիշ անուն չկա, որով կարող ենք մենք փրկվել։

Աղոթենք, աղաչենք Հայր Աստծուն, որ Սուրբ Հոգու ներգործությամբ այսօրվա տոնի միջոցով արժանի դարձնի մեզ մերձենալու եւ ճաշակելու Իր Որդու եւ մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Կենարար Մարմինն ու Արյունը, եւս մեկ անգամ ընդունելու Նրա բնակությունը մեր մեջ՝ Իր իսկ խոսքի համաձայն, թե՝ «ով ուտում է իմ մարմինը եւ ըմպում իմ արյունը, կբնակվի իմ մեջ, եւ ես էլ՝ նրա մեջ» (Հովհ. Զ. 56)։

Մեր սրտերը փորձենք կտրել մեղքից եւ թլփատված սրտերով մոտենանք Փրկիչ Հիսուսին, Որին ամենակալ Հոր եւ կենդանարար Սուրբ Հոգու հետ փառք հավիտյանս. ամեն։

Աստծու շնորհը, սերը եւ խաղաղությունը թող լինեն մեզ՝ ամենքիս հետ, այսօր եւ հավիտյանս. ամեն։

Քրիստոս ծնավ եւ հայտնեցավ։

Օրհնյալ է հայտնությունը Քրիստոսի։

Մեզ եւ ձեզ մեծ ավետիս։